

Տեղի ունեցավ զորակոչային հանձնաժողովի նիստ

27.07.2015

Հուլիսի 27-ին Գեղարքունիքի մարզպետարանում տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի զորակոչային հանձնաժողովի նիստը: Այն անցկացրեց Գեղարքունիքի մարզպետ, Գեղարքունիքի մարզի զորակոչային հանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Գրիգորյանը: Նիստին մասնակցում էին զորակոչային հանձնաժողովի անդամներ՝ ՀՀ ՁՈՒ երկրորդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Պողոս Պողոսյանը, ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ Արսեն Ադամյանը, Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Ճամբարակի եւ Սեւանի տարածքային զինվորական կոմիսարները: Զինկոմները զեկուցեցին 2015 թվականի ամառային զորակոչի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման եւ անցկացման մասին՝ հույս հայտնելով, որ մինչև զորակոչի ավարտը պլանային առաջադրանքները ըստ զինկոմիսարիատների կկատարվի, որոշ տարածաշրջաններում նույնիսկ կգերակատարվի: Մարզպետը եւ կորպուսի հրամանատարը հորդորեցին զինկոմներին՝ ամենայն պատասխանատվությամբ եւ մանրամասնորեն իրականացնել զորակոչային տարիքի երիտասարդների բուժզննումները՝ ամեն կերպ բացառելով հիվանդ երիտասարդներին Հայոց բանակ զորակոչելու դեպքերը: Նիստի ընթացքում քննության առնվեցին նաև հարցեր՝ զինկոմիսարիատներին կից բժշկափորձագիտական հանձնաժողովների գործունեությանը վերաբերյալ: Մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Գրիգորյանը հորդորեց վերանայել հանձնաժողովներում բժիշկ մասնագետների ընդգրկվածության խնդիրը և եթե կան թույլ և անպատասխանատու մասնագետներ, ապա միջոցներ ձեռնարկել նրանց որակյալ և բանիմաց կադրերով փոխարինելու համար: Այնուհետեւ հանձնաժողովի անդամները քննարկեցին զորակոչի հետ առնչվող ընթացիկ այլ հարցեր: Ամփոփելով նիստի ընթացքում հնչած առաջարկները եւ բարձրացված հիմնահարցերը՝ Գեղարքունիքի մարզպետ, մարզի զորակոչային հանձնաժողովի նախագահը հանձնարարեց մարզի տարածքային զինկոմներին՝ լավագույնս կատարել իրենց առջև դրված բոլոր առաջադրանքները, որպեսզի տարեկան և կիսամյակային ամփոփումների ընթացքում մարզը պահպանի զորակոչի հետ կապված իր առաջատար դիրքը: